

արծաթափայլ կը շողացնէ՞ սարի անապակ ջուրը . կըր իւր գոհունակութիւնը դէմքին վրայ կատարեալ է, վստահութիւն ներշնչելով հիւրին անոր ախորժակը կը բանայ, որ կրակուսն թասը ձեռք առնելով ֆրոֆրոպէն ներս քաշէ պարզ ջուրը իրրե օրերի ծարաւներէ պասպակած մը . ու զարմանալին այն է որ չի գտնուիր մէկը որ խմելէ հրաժարուի, մէկ քանի ուրիշ խղլամներ վրանի մուտքի առջև կը հսկեն, իսկ միւսները ամեն մէն իր տիրոջ ձիւ կշտին դուրս պառկած՝ կը մնան շների հետ :

Աշիրաթապետը իր եղբայրներով և որդիներով վրանի միւս մասերէն ներս մտած ժամանակ, ամենքը ոտքի կը կանգնին . բարի էրեկոյ կը մաղթէ, ու հիւրերէն ամեն մէկը մեր աչքի, մեր գլխի վրայ տեղ ունիք պատասխանելով կընդունին անոր, մինչև իր տեղը բռնէ : Աշիրաթապետը կարճ ու կարուկ անոնց առողջութիւնը հարցնելու ձևականութիւնէն անցնելով կը մօտենայ խնդրին ու կըսէ :

«Աշիրաթ . Աստուած գիտենայ (խոտէ զանի), այս սարի ետև մայր մտնող արեւը ու այն միւս սարի ետևէն բարձրացող լուսնակը, կերդնում ձեր ու իմ գլխով որ ինքս Աշիրաթի բարիքը կը կամենամ :

Ունկնդիրները կը պատասխանեն . «Թող ապրի մեր տէրը ու անոր գլուխը միշտ ողջ ու ուրախ մնայ» . իսկ նա կը շարունակէ :

«Իմ աղաներ, իմ էլիեր . Մեր աշիրաթը աղքատացեր է, դրամը պակսեր, մեր ոչխարը մեզ կեր տալու անգամ չի բաւականանար . դուք գիտէք որ Օսմանլին մեզ անկեղծ բարկեկամ չէ . մեզմէ ոչ մէկը մէկ տարի է քաղաքը երևալ չէ կրցեր, ու ի՛նչպէս երևանք, կըր տեղական փաշաներէն ու բէգերէն ոչ մէկին խալաթ մը (տուէր) տուած չունինք . ոչ ձի, ոչ թուր, ոչ ոչխար, ոչ դաւար . Այս ու այն պաշտօնէին դրոմ չենք ուղարկած, մենք ի՛նչպէս մանենք քաղաքը, մեր աւաղակութեան գօրծերու հարցերը այնտեղ մնացեր են այնպէս, հիներէն զատ նորերն ալ վրայ են բարդուած . դեռ քաղաքի սահման-